ԱՆՑՈՐԴԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՑ)

Գրեց՝ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ԵՐԵՒԱՆ

Մի փողոց:

Զանգուն:

Արարատը:

Հայեր:

Երկու բեւեռների մէջ՝ Կոնդ եւ Քանաքեռ. կովերը նախիր են դնում, իսկ մարդիկ գործի:

Մայրաքաղաքը բեռնաւորուած սայլի է նմանում, ու դարիվերը դժուարին է:

Մերամաղձոտ ու մտազրաղ մարդիկ են հայերը: Պատահական զգեստների տակ, ծանրաքայլ եկուորների կեցուածքով, նրանք ման են գալիս, նախախնամութեան առջեւ կուչ եկած՝ լծան եզների նման:

Մեծ եւ աղքատիկ ընտանիք: Գոմի եւ նոր ծնած դառնուկի հոտ է գալիս: Վանեցի աղջիկները յաղթանդամ ոտքեր ունին եւ կտրած մազեր, մինչ հորթերը անցնում են պոչերը շարժելով:

Սակայն, ամէն ինչ լոյս է: Արարատը շընչում է լայն թոքերով: Գոռում կոչում է Զանգուն եւ բարտիների մէջ թռչունները կայծկլատում են ճառագայթների հետ:

Ուրա՛խ եմ, հայրենի գիւղը ընկած ճամբորդի նման:

Ուրա՛խ եմ:

Աբովեան փողոցի անկիւնում՝ Մարգար աղայի սրճարանը: Մի քանի սեղան, մի քանի աթոռ՝ թաւլուներ:

Մարգար աղան, անանկացած նախկին խալիի վաճառական, Նոյ նահապետի նման, կանգնել է Արարատի ստորոտին, սուրճ է մատուցում:

Սրճարանը լեցրել ենք մեր իրեղէններով, բազմել ենք սեղանների շուրջը, սպասում ենք: Մի բարեկամ գնացել է մեզ համար սենեակ ճարելու: Դժուարին խնդիր: Տները ճայթում են ազգաբնակչութեան ծանրութեան տակ: Մարդիկ շատ են՝ քաղաքը փոքր:

Դեռ լաւ է, որ մի բարեկամ գրաղէտ, բարեացակամ է մեզ հանդէպ, թէ չէ՝ ծանօթ չունենք, կուսակցական չենք:

Եկել ենք Հայաստան դիտակցաբար, այս թշուառութեան հետ հաղորդուելու համար, այո՛, ասելու նիւթական բոլոր թշուառութիւններին: Այլապէս, Պոլիս էլ չէինք գնայ՝ կը մնայինք Բէոկլինի վիլլայի չքեղ բնակարաններում որ Ֆլօրանսի քաղաքակրթութիւնը տրամադրած էր հայ գանաստեղծին:

Ու հոգիս առաջին թռիչքը առնող ծիծեռնակի է նմանում:

* * *

Դրան առջեւ, փողոցի աղաքները՝ խուժանը, ինչպէս ասում են այստեղ, ծխախոտ են ծխում, բարձրաձայն հայհոյում ու կատակներ անում:

Կանգնել է մի միլիցիական (ոստիկան): «Աղա, Բիձա, ըստեղից անցիր. աղա, չան տղայ, աղա քու մէրը... Հրամաններ է տալիս:

Գիւղացիներ են անցնում: Շուկայից վերադառնում են տուն, ձեռքերին մեծ կապոցներ:

Երեկոյ է:

Փողոցի անկիւնում մի կոյր սրինդ է նուագում:

Տխուր եւ միակերպ մեղեդին սողում է կիսաքանդ մայթերի վրայից, կանգ է առնում խանութների առջեւ, ընկնում պատուհանների վրայ ձգած վերջալոյսի բոցերի մէջ, շոյում միլիցիականի կուրծքը եւ հեռաւոր յուշեր արթնացնում վեր վար ման եկող մարդկանց սրտի մէջ:

* * *

Շուարած շունների մի խումբ է անցնում: Տէրերը կորցրած, փողոցներում մնացած, լաւ ցեղի շուներ, որ հիմա վայրենացել են եւ գողութեամբ են ապրում: Անօթի, փայլուն

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան